Պարույր Սևակ

Կանցնեն օրերն այս

Կանցնեն օրերն այս և մենք նրանց հետ,
Մեր կյանքն ու դարը անցյալ կդառնան,
Եվ ինչ որ մենք ենք անվերջ անրջել՝
Մեր երազանքին մեր կյանքը խառնած,
Ինչի համար մենք տառապել ենք խիստ
Եվ պայքարել ենք ու ձգտել արյամբ,
Կտրվի նրանց անարյո՛ւն, հանգի՛ստ,
Կդառնա կենցաղ ու պարզ առօրյա...
...Ես տեսնում եմ պարզ - մանուկ մի արթուն,
Թեքված պատմության իր գրքի վրա,
Վերացած դեմքով իր դասն է սերտում:
Մեր դարն է փռվել նրա աչքի դեմ -
Գաղտնիքները՝ բաց և վերքերը՝ փակ...
Նա մեզ տեսնում է մշուշի միջից
Իր խոր աչքերի հայացքով վճիտ
Եվ սարսռում է զարմանքից մի պահ:
Անուններն է մեր նա սիրով սերտում,
Մտքում պահում է հին թվականներ.-
Երբ շահել ենք մենք մի դաժան մարտում
Եվ թշնամուն ենք մեր հողից վանել...
Երբ մաքառել ենք հավատով անմար,

Ջանացե՛լ, տքնել կամքով մի խորին,
Եվ կործանել ենք՝ կառուցման համար,
Եվ կառուցել ենք անկործանելին...
Նա ապրում է մեր լարումը կրկին,
Ե՛վ հավատում է, և՛ չի հավատում
Մեր այս օրերի պատմության գրքին
Եվ գոյությանը, կյանքին ամենքի,
Որոնց անունն է նա սիրով սերտում...
*
Անցյալ կդառնան մեր օրերն այս թեժ,
Ու մենք - այսօրվա պարզ քաղաքացի -
Կթվանք այն ժամ պաշտելի հերոս...
Եվ մանուկներին, նորածիններին
Կմկրտեն մեր պարզ անուններով...

05.IV.1947թ.
Երևան